# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՎԷՀԴ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Վանաձոր <<10>> <<հունվարի>> 2020թ., ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կատյա Նալբանդյան

Անդամներ՝ Լենա Հովհաննիսյան

Կարեն Մամաջանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գոհար Դալաքյան

«ՎԷՀԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով *գնման ընթացակարգի հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին*

1. Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են ք. Վանաձոր, Վարդանանց 100 հասցեում:

2. Ընդունել ի գիտություն, որ հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը | Էլ.փոստ, |
|---|---|---|---|
| 1. | <<Սեդա Բոջուկյյան>> ՍՊԸ | Ք. Վանաձոր, Տարոն 4, մեքենաշին. 50/1 | Movsesyan55@mail.ru |

3. *Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:*

4. *Տվյալներ պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.*
- Մասնակցի կողմից ներկայացված ծրարում հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը առկա են: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 1 օրինակ պատճեններից:

5. *Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.*

<<Սեդա Բոջուկյյան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

6 *Մասնակցի առաջարկած գինը*՝

| N | Մասնակցի անվանումը | Չափման միավորը | Առաջարկվող գինը /ՀՀ դրամ/առանց ԱԱՀ | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1. | <<Սեդա Բոջուկյյան>> ՍՊԸ | կգ | 2499555 | 2499555 |

7, Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

8. Հրավերի վերաբերյալ հարցեր և պարզաբանումներ չեն եղել:

9. Պատվիրատուի և կամ գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը ստուգելու վերաբերյալ որոշում չի կայացվել:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից գնահատման թերթիկների երկուական օրինակ հանձնվեց գնահատող հանձնաժողովի անդամներին:

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

1 գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով իրենց կողմից լրացված գնահատման թերթիկները հանձնել քարտուղարին:

Ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքների ամփոփում իրականացվեց գնահատման թերթիկների հիման վրա, որի արդյունքը արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում

| հ/հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի հայտի գնահատման չափանիշները Գնահատականը | | |
|---|---|---|---|---|
| | | Գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին | Գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին | Ընդհանուր գնահատականը |
| | | Բավարար/ անբավարար | Բավարար/ անբավարար | Բավարար/ անբավարար |
| 1. | <<Սեդա Բոջուկյյան>> ՍՊԸ | Բավարար | Բավարար | Բավարար |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2 «ՎԷՀԴ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի անգործության ժամկետը կիրառելի չէ, համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի: Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետով «ՎԷՀԴ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<Սեդա Բոջուկյյան>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝

Ծանուցել՝ ընտրված մասնակցին ներկայացնելով պայմանագրի նախագիծը և առաջարկել տաս աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

*Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Կատյա Նալբանդյան

Անդամներ՝ Լենա Հովհաննիսյան

Կարեն Մամաջանյան

Քարտուղար Գոհար Դալլաքյան